«Հաստատում եմ» _____

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի

ռեկտոր Ե. Մերդոյան

«06» մայիսի 2026թ.

# ԿԱՐԾԻՔ

## ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Գոռ Վահանի Մելիքսեթյանի «Դիզայն առարկայի դասավանդման մեթոդիկան ԲՈՒՀ-ում» վերնագրով, ԺԳ.00.02 թվանիշով «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (կերպարվեստ)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Գ. Վ. Մելիքսեթյանի «Դիզայն առարկայի դասավանդման մեթոդիկան ԲՈՒՀ-ում» խորագրով ատենախոսական գիտական աշխատանքն իրականացված է թեկնածուական թեզի պատրաստման պահանջներին համապատասխան և ավարտուն ինքնուրույն հետազոտություն է:

Հետազոտության թեմայի արդիականությունն ընդգծվում է ոչ միայն ժամանակակից ԲՈՒՀ-ի կրթապայմաններում գեղարվեստական կրթության կարևորությամբ, այլև այս խնդիրների առնչությամբ ապագա նկարիչ մանկավարժի մասնագիտական կարողությունների ձևավորման հենքով խորը մենագրական հետազոտությունների բացակայությամբ:

Այս իմաստով Գ. Վ. Մելիքսեթյանի ատենախոսությունը ժամանակի պահանջի արձագանքն է:

Հետազոտական աշխատանքը բաղկացած ներածությունից, երկու գլխից /7 ենթագլուխ/, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, 3 հավելվածից:

Ներածությունում հիմնավորվում է հետազոտության խնդրի արդիականությունը, բանաձևվում են հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակը, խնդիրները, հետազոտության գիտական ենթադրությունը և հետազոտման ձևատեսությունը, նրա

գիտական նորարարությունը, տեսաբանական և գործնական արժեքը, արմատավորման ձևերը, պաշտպանության ենթակա դրույթները:

Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է դիզայն դասընթացի գիտատեսական մեթոդաբանական հիմքերին բուհական կրթությունում, որի առաջին ենթագլխում՝ ներկայացվում են դիզայնի առաջացման սոցիալ-մշակութային պայմանները և ժամանակագրությունը: Երկրորդ ենթագլխում՝ դիզայնի ուսուցման մանկավարժահոգեբանական պայմանները, և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը մանկավարժական դիզայնի ուսուցման գործընթացում՝ երրորդ ենթագլխում:

Հետազոտության երկրորդ գլխում բացահայտվում են դիզայնի դասավանդման ձևատեսությունն ու բովանդակությունը մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետում, հիմնավորվում են ապագա նկարիչ-մանկավարժների մասնագիտական կարողությունների, հմտությունների ձևավորման և զարգացման պայմանները, ձևակերպվում հայեցակարգային դրույթները, մշակվում մանկավարժական դիզայն առարկային առաջարկվող մոդելը, իրականացման գեղարվեստամանկավարժական պայմանները:

Եզրահանգման մեջ բերվում են հետազոտության հիմնական հետևությունները:

Հավելվածներում ներկայացված են.

ա/ դիզայնի հայեցակարգային ծրագիրը (հ. 1),

բ/ ուսանողների կատարած ծրագրային պատկերագրական առաջադրանքներ (հ. 2),

գ/ դիդակտիկ պատկեր-աղյուսակներ, մշակված ուսանող-դասախոս համագործակցությամբ (հ. 3), որոնք համոզիչ և ակնառու կերպով բացահայտում են անցկացված փորձարարության ընթացքն ու արդյունքները:

Որպես Գ. Վ. Մելիքսեթյանի ատենախոսության առանձնահատուկ դրական դրսևորում՝ հարկ է նկատի ունենալ նրա կողմից լայնորեն և խորությամբ օգտագործված փիլիսոփայական, արվեստաբանական, մանկավարժական, հոգեբանական և ձևատեսական գրականությունը, փորձարարական ձևատեսության հանգամանալի մշակումը, համոզիչ, ինքնատիպ համակարգի ստեղծումը:

Ատենախոսական հետազոտության արդյունքում լուծված են առաջադրված բոլոր խնդիրները, հաստատված է գիտական ենթադրությունը: Այսպիսով, ատենախոսը կատարել է մի հետազոտություն, որով իրականացվում է պետական, հասարակական-մշակութային կարևոր նշանակություն ունեցող գիտական խնդրի լուծում:

Գ. Վ. Մելիքսեթյանի գիտական նորարարությունն ու տեսաբանական արժեքն ամփոփվում է դիզայն առարկայի դասավանդման առանձնահատկությունների դրսևորմամբ՝ որպես իրականության գեղարվեստական արտացոլման յուրահատուկ ձև, որպես կերպարվեստի ուսուցչի մասնագիտական կրթության զարգացման միջոց՝ կրթական, հաղորդակցական, կազմակերպչական, ուսումնադաստիարակչական ոլորտում:

Հետազոտության գործնական արժեքայնությունը որոշարկվում է նրանով, որ ատենախոսը մանկավարժական դիզայնի դասավանդման հեղինակային ձևատեսություն է ստեղծել բուհական կրթության հիմքով, իրենց արդյունավետությունը փաստող ձևատեսական հանձնարարություններ մշակել: Նա հեղինակել է ուսումնական ձևատեսական ուղեցույցներ, ծրագրեր:

Անցկացված տեսաբանական և փորձարարական հետազոտության արդյունքում ատենախոսը մի շարք եզրահանգումներ է կատարել, որոնք առանձնահատուկ կարևոր նշանակություն ունեն ապագա նկարիչ-մանկավարժների գեղարվեստական կրթության խնդրի ձևատեսական հետագա մշակման և նրանց մասնագիտական կարողությունների կատարելագործման առումով: Մասնավորապես, այդ եզրահանգումները վերաբերվում են նրան, որ ատենախոսի փորձարարական հետազոտությունը հաստատում և համոզիչ կերպով ապացուցում է դիզայն առարկայի մեծ հնարավորությունները գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանողների գեղարվեստաստեղծագործական հմտությունների, նրանց հոգևոր մշակույթի ձևավորման, հոգեկան բոլոր այն կառույցների /տեսողական ընկալումներ, պատկերային հիշողություն, պատկերային մտածողություն, պատկերի վերարտադրում/ զարգացման մեջ, որոնք հանրագումարում որոշարկում և արտահայտում են այս կամ այն ուսուցչի անհատականությունը: Սա պահանջում է տվյալ խնդրի դիտարկում բոլոր տեսանկյուններով /վերը նշված կառույցները/, ինչը

իրականացված է այս հետազոտության մեջ: Ընդ որում, ուսանողի անձի մանկավարժական մշակույթի զարգացմանը հաղորդակից հոգեբանական գործընթացների, դրսևորումների բացահայտման հանգամանալիությունն ու խորքայնությունը որոշարկում է նաև ընտրովի դասընթացների ուսումնատեսական հնարքների, ուղիների, միջոցների ու ձևատեսական հանձնարարությունների մշակման խորքայնությունն ու հանգամանալիությունը:

Ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացման գործընթացի ուղղորդման խնդիրը, ինչպես նշում է հեղինակը, կարող է որակապես լուծվել դիզայն առարկայի դասավանդման ճիշտ ախտորոշման պարագայում:

Ապագա նկարիչ-մանկավարժի մասնագիտական կարողությունների ուսումնասիրման՝ ատենախոսի մշակած հատուկ քարտեզն ամրագրել է նրանց գեղարվեստական նախագծումների իմացությունների, ունակությունների, հմտությունների աստիճանը և համապատասխան որակները կերպարվեստային տարբեր ոլորտներում:

Մասնագիտական կարողությունների և հմտությունների աստիճանը գեղարվեստական գործունեության յուրաքանչյուր ոլորտում որոշարկվում է չորս ցուցիչներով.

- տվյալ ոլորտում ուսանողի /ապագա ուսուցչի/ գեղարվեստական իմացությունների, ունակությունների, հմտությունների աստիճանով,
- գեղարվեստա-գեղագիտական գործունեության ազդակային դրդապատճառներով,
- ԲՈՒՀ-ում ուսանողների կողմից նախագծային խնդրառու վիճակների լուծման ճշգրտությամբ,
- գործունեության տարբեր ոլորտներում ուսանող-դասախոս, ուսանող-ուսանող փոխհարաբերություններում գեղարվեստամանկավարժական կենսունակության աստիճանով:

Փորձարարության արդյունքների ամփոփումն ու վերլուծությունը վկայում են այն մասին, որ մանկավարժական ԲՈՒՀ -ում դիզայն առարկայի դասավանդման մշակված փորձարարական ձևատեսությունը /ուսումնատեսական համալիր հայեցակարգային ծրագրեր, ձևատեսություններ, մանկավարժի գործունեության մոդել, ձևատեսական ցուցումներ, դիդակտիկ աղյուսակներ/ և այդ հիմքով ապագա

կերպարվեստի ուսուցչի մասնագիտական կարողությունները և հմտությունները զգալիորեն արդյունավետ են և ամբողջականորեն ապահովում են նրանց մանկավարժական մշակույթի ձևավորումը:

Այսպիսով, Գ. Վ. Մելիքսեթյանի ատենախոսական հետազոտությունը գրված է գիտական-ուսումնատեսական բարձր աստիճանով և հասարակական-մշակութային կարևոր նշանակության գիտական խնդրի լուծում է հանդիսանում, ինչը էական ներդրում է ապագա նկարիչ-մանկավարժների մասնագիտական կրթության և գեղարվեստաստեղծագործական կարողությունների տեսական և գործնական ընթացքի հետագա մշակման մեջ:

Այս ամենով հանդերձ, հարկ է նշել գրախոսվող ատենախոսության վերաբերյալ որոշ նկատառումներ.

1. Ատենախոսության գլխակարգային բովանդակության, ներածության մեջ բավականաչափ մեծ ուշադրություն է հատկացված ուսանողների մասնագիտական ներուժի բացահայտմանը, որպես ապագա ուսուցչի գեղարվեստական կրթության միջոցի: Մինչդեռ ատենախոսության մեջ բավականաչափ հստակ չի արտահայտված հանրակրթական դպրոցներում այդ կարողությունների կիրառման տեսանկյունը:

2. «Մանկավարժական դիզայն» առարկայի բնութագիրը ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում, որպես ուսումնական առարկայի, մինչ այսօր սակավ է վերլուծված:

Նշված բացթողումները սկզբունքային նշանակություն չունեն և չեն կարող նվազեցնել ատենախոսության գիտական արժեքը:

Գ. Վ. Մելիքսեթյանի ատենախոսության հիմնական բովանդակությունն ամբողջովին արտացոլված է նրա հրապարակումներում, գիտական ինքնուրույն աշխատության բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Եզրակացություն.

Գ. Վ. Մելիքսեթյանի «Դիզայն առարկայի դասավանդման մեթոդիկան ԲՈՒՀ-ում» վերնագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է իր հայցած ԺԳ.00.02 թվանիշով «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա

(կերպարվեստ)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Գրախոսությունը քննարկվել և հաստատվել է Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարանի «Մանկավարժություն» և «Սպորտ և արվեստ» ամբիոնների 2026թ. մայիսի 5-ի թիվ 1 համատեղ նիստում: Նիստին մասնակցել են մ.գ.դ, պրոֆեսորներ Ա. Մկոյանը, Ռ. Մարդոյանը, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտներ Լ. Ղուկասյանը, Մ. Կարապետյանը, Լ. Հակոբյանը, Ն. Ադամյանը, Լ. Միքաելյանը, Ն. Գրիգորյանը, Ա. Յայլոյանը, մանկ. գիտ. թեկնածուներ Մ. Ղալաչյանը, Ա. Զադոյանը, Շ. Ալեքսանյանը, պրոֆեսոր Վ. Խաչատրյանը, արվեստագիտ. թեկն., դոցենտ Ա. Մարգարյանը, դոցենտներ Ա.Միքայելյանը, Ա. Պապոյանը, դասախոս Ա. Մանվելյանը:

Մանկավարժության ամբիոնի վարիչ,
Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Ղուկասյան

Սպորտի և արվեստի ամբիոնի վարիչ,
Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Գ. Աղանյան

Մանկավարժության ամբիոնի վարիչ Լ. Ղուկասյանի և Սպորտի և արվեստի ամբիոնի վարիչ Գ. Աղանյանի ստորագրությունները հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտական քարտուղար, կ.գ.թ., դոցենտ Կ. Պետրոսյան

05.05.2026թ.